ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Բ. ՄԷՌԻ, ԹԻՒ 484 — 12 HUITIÈME ANNÉE ՇՈՐԵՔՇԱԲԹԻ, ՄԱՐՏ 19 / 1 ԱՊՐԻԼ 1908

ՀԱՍՑԷ

Rédaction du Journal arménien
ARCHALOUYCE
(EGYPTE) LE CAIRE

Չի հրատարակուած ձեռագիրները եւ չե՛ն տրուիր։

Բաժանորդագրութիւնը կանխիկ է. իսկ ծանուցումները կ'ընդունուին մասնաւոր հանձնաժողովէն։

Պատասխանատու խմբագրութեան
ԵՂԻՇԷ ԹՈՒՐՈՄԵԱՆՑ

ԱՐՇԱԼՈՅՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹԱՐԹԹԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԵԳԻՊՏՈՍ
Տարեկան դրամ - ոսկի 30

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Տարեկան փրանգ 10

Բաժանորդագրութիւնները պիտի ուղղուին միայն ԱՐՇԱԼՈՅՍԻ գրասենեակը։

Թէ՛ ԱՐՇԱԼՈՅՍԻ եւ թէ՛ ՏՊԱՐԱՆԻՆ վերաբերեալ նիւթական խնդրոց համար պէտք է դիմել Խմբագրութեան հասցէով բերթիս Մատակարարին, որ է՝

ԳԷՈՐԳ ՓԱՓԱԶԵԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇՈՐԵՔՇԱԲԹԻ ՕՐԵՐԸ

Ցօդուածագիրները ուղղակի պատասխանատու են իրենց գրածներուն

ՀՍՏԸ 20 ՓԱՐԱ ՈՂՋ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԲԵՐ

ՄԵՐ ԳԻՐՔԸ

—o—

«Արշալոյս» ի սակաւաթիւ և մեզի անծանօթ բարեկամները, և բազմաթիւ ու ծանօթ հակառակորդները, ինչպէս նաև չեղոք աղգայիները, ժամանակէ մը ի վեր ըսկած են իրարու հարցնել թէ՝ ի՞նչ է կամ ի՞նչ պիտի ըլլայ «Արշալոյս»ի դիրքը հայ լրագրութեան մէջ։

Մենք այսօր՝ մեր եռամսեայն լրման առթիւ՝ այդ տարակոյսը քիչ մը փարատել կ'ուզենք։ Հետեւեալ քանի մը հատուածներուն մէջ խըտացնելով մեր ներքին ծրագրին մէկ մասը, որ է.

1. «Արշալոյս» է՝ և պիտի մնայ ոչ-կուսակցական անկախ թերթը։

2. «Արշալոյս» բոլոր կուսակցութիւններն ալ կ'ընդունի իբրև աղգայիններ, և ըստ այնմ կը վարուի անոնց նկատմամբ։ Խտրութիւն չը դներ Դաշնակցականներու, Վերակազմեալներու և Հին Հնչակեաններու, ինչպէս նաև չեղոք Հայ յեղափոխականներու և պարզ աղգային անհատներու միջև. ինք անոնց ամենուն ալ կը պատկանի, և անոնք ամենն ալ իրն են հաւասարապէս։

3. Իր ուղղութիւնը պիտի ըլլայ հետեւաբար «աղգայնական» և աղգին անբաժան մնալուն թեր՝ և նուազուրդի դրուելուն դէմ պիտի խօսի։ Կ'արհամարհէ կուսակցամոլութիւնը և քաջալերանքի բառ մը չ'տար մէկ կամ միւս կողմին, կուսակցամոլներու կարծիքը, եթէ պատահի, վերապահութեամբ կը հրատարակէ, դիմողներուն անհատական իրաւանցը դէմ ղրկանք ըրած չ'լինելու համար։ Այս պարագաներուն մէջ վիճաբանութեան նիւթին կարևորութեանը համաձայն երբ յօդուածի տեղ կուտայ, վերջին խօսքը ամբաստանեալ կողմին թողլով, որ առ առաւելն 20 տողէն աւելի ըլլալու չէ։

4. Կարգ մը դիմակաւորներ, որոնք աղգային այս կամ այն հաստատութեանց մէջ սպրդած են ու քննադատելի և անուղիղ անցեալ մը պարածածկել կ'ուզեն, դիմակաղերծ պիտի ըլլան, և հանրութեան ցուցադրուին, որպէսզի հանրութիւնը չի խաբուի այդպիսիներէ։

Ցօդուածագիրներուն պատշաճութեան սահմաններու մէջ շարժիլը և բացատրութիւնները նոյնպէս պատշաճ և չափաւոր լեզուաւ տեղի ունենալը անխուսափելի է։ Օրինական պատասխանատուութիւն հրաւիրող յօդուածները կողոլը կը նետուին, եթէ նոյն իսկ պէտք եղած դիւրութիւնը ունեցած ըլլայ «Արշալոյս» ինքգինքը արդարացնելու օրինաց առջև, այդպիսի ձախորդ պարագաներու հանդէպ։

5. «Արշալոյս»ի խմբագրութիւնը տեղական մամլոյն ազատութեան նեղած սահմաններուն մէջ. պիտի քննադատէ կուսակցութեանց շարժումներուն մէջ ընդհանուր հայութեան ցնաս պատճառելու բնոյթ ունեցողները։

Այս պարագային մէջ ալ չափաւոր կը վարուի և միշտ աղգային ընդհանրական շահերը ի նկատի կունենայ։

Ուրեմն «Արշալոյս» միակ «Աղգայնական» թերթն է որ ո՛ և է աղդեցութեան ներքև չ'գործեր և իր ուղեցոյցն է՝ անկախութիւնը, անկեղծութիւնը, ճշմարտասիրութիւնը և աղգային նիւթական և բարոյական շահերը։ Եթէ իր այս ընթացքը վրիժառութեանց զգացումներ ալ արթնցնէ սանց կուսակցամոլաց սրտին մէջ, տեղի չ'տար՝ և ինքզինքը կը պաշտպանէ, ինչ միջոցներ որ կընծայեն իրեն տեղական հանգամանքները և տիրող օրէնքները։

ԽՄԲ.

ԼՕՌԵԼ, ԼԵՌԼԱԹԵԼ

Ես չեմ հաւատար որ Քրիստոս ընկերվարական մը եղած ըլլայ, ինչպէս կ'ուզեն զայն մեզի ներկայացնել այսօրուան ընկերվարականները, որոնք՝ եթէ չ'եմ սխալիր՝ ամեն բան հաւասարեցնելու առաքելներ են։ Այնքան կորովամիտ և յստակատես էակ մը, ինչպէս էր Քրիստոս, որ կարծես դարերու փորձառութեանը մարմնացումն էր, չ'էր կրնար վերոյիշեալ իմաստով ընկերվարական մ'ըլլալ, քանի որ անշուշտ գիտէր թէ՝ հաւասարութիւնը բնական օրէնքէն դուրս է և թէ հաւասարութիւնը տիեզերքին հաստատակշռութիւնը հիմն իվեր պիտի տապալէր . . . Բայց յեղափոխա՞ն, այ՛ո. և տիպար յեղափոխական. խօսքի և գործի յեղափոխական։ Գործը յայտնի է. ո՛չ միայն անոր մէջ կ'ապրինք, այլ աշխարհս անով կը կառավարուի քսան դարերէ ի վեր։ Իսկ խօսքե՞րը, անոնք մոռցուած են, դժբաղդաբար։ Ես ա-նոնցմէ մին պիտի յիշեմ թէ՝ դրժբաղդաբարը արդարացնելու և թէ՝ Անոր յեղափոխական ըլլալը ապա-[illegible] դինի նոր ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ պայթուցանէ գինին նոր զտիկսն հինս, ինքն հեղու, և տիկքն կորընչին։ Այլ գինի նոր ի տիկս նորս և երկոքին պահին»։ Նոր յեղափոխութիւնը, ստրկասուն մեր հին գլուխներուն մէջ չ'էր կրնար պահուիլ, և որպէս զի պահուէր, պէտք էր մեր գլուխները փոխել։ Այս մասին անհոգ գտնուեցանք և տեղի տուինք շարք մը հիասթափիչ պայթումներու, որոնց նորագոյնն է՝ Արփիարի սպանութիւնը և Վանայ դէպքը։

Առաջինը բաւական ծեծուեցաւ և՝ ըստ երևոյթին՝ տակաւին պիտի ծեծուի հրապարակին վրայ. իսկ երկրորդը, վասն զի աւելի կսկծալի է, վասն զի աւելի քստմնեցուցիչ է, վասն զի աւելի կը փոզահարէ մեր ինկածութիւնը, վասն զի զոհը ճիշդ մեր սիրան ու հոգին կազմող համեստ ժողովրդական դասակարգին, անճար անճարակ, զրկարտուած դեղեցիկ սեռին կը պատկանի, և վասն զի ուրիշ շատ մը վասն զի ներ կը վերցընէ, այդ երկրորդ դէպքը սահմանուած է յօդս ցնդելու սուղ ժամանակի մէջ . . . Աղդանուէր կտրիճ մը, մէկ ձեռքը սուր մը, միւս ձեռքը սուրբ դատին օդածածան դրօշակը խրոխտաբան և սիգաճեմ, հարիւրաւոր թշնամիներ դիտապաստ փըռած, հաղարաւորներն ալ ոչնչացնելու պատրաստ, (դէթ ես այնպէս կ'երևակայեմ) անմեղ կոյս մը կը պըլդէ . . . Է՜հ, աստ ալ բա՞ն մ'է . . . Ինչո՞ւ թող չտալ որ հերոսները քիչ մը գլուխնուն։ Նոյն իսկ եթէ այդ քմահաճոյքը հարիւրաւոր թանկագին կեանքեր հնձէ, խելակորոյս նշանածը մատնութեան գերեզմանը նետէ և Ցեղափոխութեան վեհապանծ դրօշակը տղմաթաթաւ յօշոտէ . . . Այս սիրադործութիւնը ինծի կը յիշեցնէ հայդուկային հանման արարք մը, որուն զոհ դնայ ամուսնացած կին մը ռուսաբնակ, զոր խիստ մատէն ճանչցած էի։ Եղեռնալի մահով մը հնձուելէն ետքը, հոգերու տակ կը հանդչի նէ հիմայ, Աղգին կոակելով իր խորաթոց ամուսինը և երկու անմեղ [illegible] ոսկրներուդ, Տիկի՜ն, հանգի՛ստ քու սրտիդ, ո՞վ Կոյս. դուք, իմ աչքիս, անվթար պահած էք ձեր սրբութիւնը, ձեր առաքինազարդ պարկեշտութիւնը, ձեր յարգելիութիւնը . . .

* * *

Առ որս անկ է։

Արապերէնս շատ աղքատ է. բայց և այնպէս անցածները այնպէս թուեցաւ ինծի թէ՝ արապերէն Ալ-Աֆքեար թերթը, Եգիպտոս հիմնուած Հայկական Ընկերութեան մը վրայ խօսելով, բաներ մը կ'ըսէր, որոնց իմաստն է. «յիշեալ ընկերութիւնը դրամ կը հաւաքէ, զէնքեր գնելու և Սասանեան կայսրութեան դէմ ապստամբելու համար»։ Ան. ան։ Հետաքրքիրները կրնան այս աղուրիկ գրութիւնը ամբողջովին կարդալ յիշեալ թերթին ամսոյս (Մարտ 1908) 20 էն 23 թիւերէն մէկուն մէջ։

* * *

Քանի մ'օր առաջ Ս. Օ. կը հարցընէր այս էջերուն մէջ, «Աստուածնիդ սիրէք. թուրքէն ի՞նչ տեսանք որ . . .» են։ Թուրքէն ի՞նչ տեսանք, ա՜հ ապերախտը . . . Թուրքէն մեր տեսածն այն է որ, գոնէ՝ դէշ աղէկ Հայութիւն մը վերապրեցաւ մինչև այսօր։ Եթէ եօթը դար առաջ Հայաստան փոխանակ Թուրքին, Իտալիայի կամ Ֆրանսայի ձեռքն ինկած ըլլար, կը կարծէ՞ք որ այսօր Սեդրակ մը, Սար-

գիս մը, Պերճ մը գտնուէր . . . : Անունը նշանակութիւն չ'ունի մի ըսէք : Այսօր անունը կ'երթայ վաղը լեզուն, միւս օր հոգին (ապդութեան) : Նշանակութիւն ունենալուն համար է որ «Փ»ը «Ֆ»ի կը փոխուի. «եան»ը մէկդի կը նետուի : Դարեր առաջ Եւրոպա գաղթած հազարաւոր հայ ընտանիքներէն քանի՞ հայ անհատ կարելի է գտնել : Նոյն իսկ այսօր ալ այնպէս չէ՞ . . . : Ամբողջ բնութիւն, մարդ էակն ալ մէջն առնելով, մաքառումով միայն կ'ապրի : Երբ մաքառումը դադրի, արդէն մահը վերահասած ըսել է : Ապդ մ'ալ մաքառումով կը պահպանէ իր գոյութիւնը : Թշնամի տարը, իրեարմարտ հաւատալիք գերադոյն ազդակներն են կեանքի պայքարին : Մահմեդական և վայրենի Թուրքիայ պատեան եղաւ Հայութեան, մինչդեռ քրիստոնեայ և քաղաքակիրթ Եւրոպա իր մէջ ձուլեց մէկէ աւելի ազգեր, անոնց անունները մի միայն պատմութեան աւանդելով : Այս է բնութեան օրէնքը, որ անդամ մ'ևս կուգայ լուսաբանել դարի և յարի առեղծուածը :

* * *

Ռումանիայէն ինծի հասած նամակներէն կը տեղեկանամ թէ Ռումէն կառավարութիւնը դարձեալ սկսեր է Հայերուն մուտքը արգիլել իր երկրին : Բայց այս զգուշական միջոցը մեզ զարմացնելու հանգամանքը կը կորսնցնէ և կ'սպասենք նոր տարաձայնութիւնի երաւ է որ «Մեր մարդկային գերադոյն խնդալն է, օրէնքներն ու իշխանութիւնները բառնալ աշխարհի երեսէն ու ապրիլ ազատ, անկաշկանդ, մի միայն մեր դիտակցութիւնն ու մեր խիղճը ունենալով մեզի սահմանագիծ Բարին և Չարին միջև» : Գտնուած է և երբէք պիտի գտնուի՞ եղեռնագործ մը որ իր գիտակցութեան և խղճին ետև չ'ապաստանի զինք չքմեղացնելու համար . . . :

* * *

Պէ՞տք է սպաննել . . . :

— Այո՛, կը պատասխանեն, բայց միայն դաւաճանը. ծո՛ ին այս կողմը և ո՛չ այն կողմը :

Բայց եթէ ամեն ոք իր խղճին և դիտակցութեան ձայնին անսայ, ի՞նչպէս սահմանագծելու է դաւաճանութիւնը և ո՞ր ինք է դաւաճանը բնորոշող յատկութիւնները : Այդ յատկութիւնները աղի պէս կը ջրոտի՞ երբ ծովն անցնին : Իբրև բարոյական Պրոպատիկէ՞ նկատելու է արտասահմանը, ո՛ւր ինկողը կ'անմեղանայ : Մի քիչ աւելի բացայայտութիւն անհրաժեշտ կը կարծուի երբ կը յուզուին մահու և կենաց խնդիրներ (առանց բառախաղի) :

Ա. ՊԱԼԵԱՆ

ԱՋԳԱՅՈՒՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԱԿՆԿԱԼԸ

Թերևս չ'խօսէինք առ այժմ սա փոքրիկ միջադէպին մասին, որ Մարտ 25ի երեկոյին անցաւ անանշան շուքով մը : Բայց որովհետև սա նոր տարաձայնութիւններու տեղի տուած է, և որովհետև «փոքրիկ միջադէպ» ըսածնիս մէկ քանի ուրիշներու ներկայութեան տեղի ունեցած է որոնցմէ մին էր Տիար Ա. Պալեան, Գ. Անուշեան, մէկ երկու բառերու մէջ ամփոփենք իրողութիւնը :

Անցեալ Զորեքշաբթի երեկոյին «Արշալոյս»ի հրատարակումէն քանի մը ժամ յետոյ, Ցոյն պարոն մը կը ներկայանայ թերթիս Տպարանը և յայտարարելէ յետոյ թէ ինք գաղտնի ոստիկանութեան կը պատկանի և թէ՝ Պ. Առաքել Փափազեանի և Պ. Վահան Մալէզեանի (փաստաբան) սերտ մտերմութիւնը կը վայելէ, ու կը փափաքի որ իրեն տեղեկութիւն տրուի Լարենց անունով մէկուն վրայ, որուն համար թերթին մէջ գրուած հատուած մը կայ եղեր, և թարգմանուած է եղեր արդէն ոստիկանութեան քով :

Խմբագրութեանս քարտուղարը ի պատասխանի կը յայտարարէ որ՝ թէև այցելուին բարեկամները կը ճանչնայ, թէև անոնք՝ ինչպէս ինք կ'ըսէ, հրապարակին ծանօթ անձեր են, թէև ինք ալ — այցելուն — կրնայ գաղտնի ոստիկանութեան պատկանած ըլլալ, սակայն իրեն ըրած հարցումներուն կրնայ պատասխանել միայն պատկանեալ պաշտօնատեղւոյն և պաշտօնատարներուն առջև, հետևաբար եթէ [illegible] հրաւէրի մը պատասխանելու պատրաստ է և այդ հրաւէրի խնդիրը հետևեալ օրուան կը ձգուի, ու ցայսօր ոչ ոք կը ներկայանայ այդ մասին նոր հարցեր ուղղելու . . . :

Պ. Վահան Մալէզեան, ինչպէս մեզի լուր տրուեցաւ մէկ քանի բարեկամներու կողմէ, ասկէ առաջ ալ, Պ. Մակար Բէթթօի միջոցաւ ճամբէն անցնող երիտասարդի մը և թերևս ուրիշներու ալ նմանօրինակ հարցումներ ուղղած էր և այդ բանին համար նեղացողներ ալ եղած էին, բայց մենք չուզեցինք այն առեն զբաղիլ ատով :

Պատչաճութեան դէմ է այս վարմունքը անմեղ հայերու հանդէպ, և չենք կարծեր որ իրենք կառավարութեան ո՛ և է մէկ ճիւղէն արտօնուած ըլլան իրենց չի վերաբերած գործերու մէջ մտնել, այդպէսով ո՛ և է ազդեցութիւն ձեռք ձգելու յուսով . . . :

Կրնայ ըլլալ որ միամիտներ գտնուին և մէկէն ի մէկ վախնան այդպիսի հարցերու առջև յանկարծակիի գալով. բայց անդին հանրային կարծիք մը կայ, ու քիչ մը անդին ալ կառավարութիւնը և իր օրէնքները :

Այս քանի մը բացատրական տողերը կը յուսանք թէ բաւական են հերքելու համար ա՛յն տարաձայնութիւնները թէ՝ Տ. Եղիշէ Թորոսեանը բանտարկուած է : Որովհետև այդ տեսակ անիրաւութիւն մը տեղի ունեցած չէ և չի՛ ալ յուսացուիր . . . :

ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅԵՐԸ

«Ռաղմիկ»էն — Պուլկարիոյ Ներքին գործոց Նախարար Պ. Թաքեվ սահմանադրիչի Վարչական իշխանութեանց ուղղած է եղեր կարգ մը պաշտօնական հրահանգներ, որոնցմով կը հրաւիրէ ճնշումը՝ ամէն տեսակ յեղափոխական շարժման և ձերբակալուած բոլոր յեղափոխականներուն՝ Պուլկարիոյ Ներքին գաղաքները. այն Պետական Պաշտօնեաները՝ որոնք կը համակրին յեղափոխական շարժման, անմիջապէս պաշտօնանկ պիտի ըլլան : Անկէ զատ հրամայեր է իր ստորադաս Վարչութեանց՝ թոյլ չտալու Պուլկարիոյ մէջ ապաստանած Հայ գաղթականներու վրայ և կարգը խանգարման առաջին մէկ նշանին զանոնք արտաքսել երկրէն դուրս : Հրամայեր է նաև երևան բերել և երկրէն դուրս արտաքսել բոլոր այն հայերը՝ որոնք 905 թն մասնակցած էին Սուլթանի մահափորձին :

ԺԱՄԱՆՈՒՄ

Տեղւոյս Հայ հռոմէականաց Նորընծիր Առաջնորդը, որ այս պահուս Աղէքսանդրիա է, Գահիրէ պիտի գայ այս ուրբաթ կամ շաբաթ օր :

ԲԱՌԱՍՈՒՆԵՐ

Թէ՛ Գահիրէի և թէ Ապէք սանդմիոյ Եկեղեցիներուն մէջ, ի հանգիստ հոգւոյ ազգասէր Արփիար Արփիարեանի կիրակի առաւօտ հոգեհանդիսաւոր պաշտօն կատարուեցաւ անոր եղերական մահուան քառասնօրեակին առթիւ :

ԹՂԹԱՊԱՆԱԿ

ԴԵՐ. ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՆԱՄԱԿԸ

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԵԳԻՊՏՈՍԻ
ԴԻՒԱՆ ՔԱՂԱՔ · ԺՈՂՈՎՈՅ
ԱԶԳ. ԳԱՒ. ՎԱՐՉ.
Թիւ. 2538

Գահիրէ, 2/15 Փետ. 1907

Ազնիւ
Տիկին Մաքրուհի Ե. Թորոսեան
ի Քաղաքիս

Ազնիւ Տիկին

Ինչպէս գիտէք Ձեր ամուսնոյն Պ. Եղիշէ Թորոսեանի գոյքերէն մաս մը ասկէ յառաջ հակզ եղած էր դատարանի կողմանէ և վաճառուած, ըստ խնդրանաց Շահրոզեան եղբայրներու :

Այս անգամ դատարանէն ազդարարուած է Առաջնորդարանիս թէ գոյքերուն մէկ մասն ալ հակզ եղած է և դատարանի Պատուիրակին ձեռքով պիտի վաճառուի անշուշտ վրայ՝ տարւոյս Մարտ 5ին, Երեքշաբթի, առաւօտեան ժամը 11ին :

Զա՛յս ազդարարելով Ձեզ՝ կ'աւելցընենք թէ Ազգային դիւանատան հրահանգ արուած է մեր կողմանէ՝ վերոյիշեալ հակզին թուղթերը և պարտքատէրերուն ամբողջ դնել Ձեր տրամադրութեան տակ որուն պարտնակութեան կրնաք տեղեկանալ, առանց տեղափոխելու զ'այն :

Ողջունիւ և օրհնութեամբ
Ձեր ազօթարար
Առաջնորդ Եգիպտոսի Հայոց
Մկրտիչ Ծ. Վարդ. Աղաւնունի

Ման. Խմբ. — Եթէ Դ. Առաջնորդի նամակին ոճը վիրաւորիչ տեսնուի, այդ վիրաւորանքը ընդհ. հայութեան ուղղուած է ո՛չ թէ անհատի մը . . .

ՌՈՂՈՒՔ ԾԸ

— o —

Կովկասեան Դերասանական խմբի անդամ Տ. Մ. Բրուտոսի խնդրանաց վրայ յետագայ դրութիւնը կը հրատարակենք յանուն անկողմնակալութեան :

Գահիրէ 29 Մարտ 1908

Պատուարժան
Խմբագրութիւն «Արշալոյս» թերթի
Ատ

Խնդրում եմ տեղ տալ Ձեր առաջիկայ համարում հետևեալ մի քանի տողերի իսկ արդարութեան :

Մի քանի օր առաջ Տիկին Սիրանոյշի ինձ հետ պատահած անախորժ դէպքերը սուր կերպարանք ստանալով՝ Տիկինը թոյլ տուեց իրան հոչակին անվայել վարմունքով զրպարտութեան դիմել՝ մատնելով ինձ Տեղական ոստիկանութեան, չունեցած փաստերով մեղադրում էր ինձ իբր զեղծարար. եւ խմբի պականող 1500. դրշ. գումարի իւրացնելու խնդիր էր յուզում. չը տնտնուած բռնութեան եւ սպառնալիքի տակ ընկճուելով՝ իմ երաշխաւոր թուղթի վաճառական Պ. Առաքել Փափազեան 800 դրշ. վճարեց իբր գրաւական. դրանով չը բաւականանալով Տիկին Սիրանոյշը զանազան մատնութիւնների դիմեց բանտարկել տալով ինձ. բայց հրաշխաւորի արդար բողոքից ազատ թողուեցայ. իսկոյն եւ եթ դիմեցի փաստաբան Պ. Վ. Մալէզեանի խնդրելով պաշտպանութիւն իմ անարդուած պատուի եւ դրամական հաշիւների եւ պահանջների : Պ. իրաւաբանը՝ նախ քան օրէնքի բարձր համարից նամակով դիմել Տիկին Սիրանոյշի՝ առաջարկելով կազմուած հաշուեքննիչ վճռանխմբի իրաւախոհ կարգադրութեանը :

Հակառակ մեր բոլոր յոյսերին եւ իրան յարգող բարեկամների դիմումներին Տիկինը իրաւունք համարեց մատնախմբի անդամ փաստաբան Պ. Ս. Փափազեանից խմբին պատկանող նպաստի եւ բաժանորդագիրներից մնացորդ ապառիկները ստանալով գաղտագողի մեկնիլ դէպի Աղէքսանդրիա, թողնելով այս տեղ ինձ եւ խմբի չորս անդամներին ծանր կացութեան մէջ. Տիկնոջ այս վերին աստիճանի ագեղ եւ անխիղճ վերաբերմունքի համար դիմում եմ, դաւոն սրտով յարգելի հասարակութեան սղջամիտ դատակարգին անաչառ դատաստանին :

Ձեզ եմ դիմում նաեւ Կովկասում գտնուող դերասանական խմբի անդամներ. եւ Թիֆլիզի Տրամադիկական ընկերութեան. Դու՛ք եղիք արդար դատաւորներ :

Տիկին Սիրանոյշ փոխանակ Հայ թատրոնին բարձր գաղափարը տարածելու Եգիպտահայերին, իր վարմունքով խայտառակեց Հայ թատրոնի եւ դերասանների վարկը, հետը տանելով միայն տխուր յիշատակներ ու անկլիակաս փայլուն սակիներ :

Կովկասեան դերասանական
խմբի անդամ.
Մ. ԲՐՈՒՏՈՍ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԴՈՒՄԱՐՈՒՄ

Ամենէ՛ն շահեկան և կարևոր խնդիրներէն մէկն է այժմէութիւն-

ներու մէջ, բնակարաններուն սը-զութիւնը, որ վերջերս, ինչպէս կը կարծուի, անտանելի դարձած ըլլալու է և Եգիպտաբնակ հանրու-թիւնը կղբաղեցնէ։

Անցեալ օր մեծ միթինկ մը տեղի ունեցած է Էօզպէքիի պարտէզին մէջ, ուր վարձքերու սղութեան և կալուածատէրերու գործակալնե-րուն ընթացքին դէմ առնախօսու-թիւններ կատարուած են ներկա-ներուն միաքերը պատրաստելու հա-մար, որպէսզի, վճռական քայլեր առնուին, և վերջ մը դրուի այս անտանելի կացութեան։

Հաւանական է որ նպաստաւոր արդիւնքի մը յանդին վերջ ի վերջոյ այս գումարումները։

Վերջին պահուն կը տեղեկա-նանք թէ Դաֆէ Պօսֆորի մէջ նոր գումարում մը տեղի ունեցած է և Յանձախումբ մը ընտրուած։ Ուրախ ենք ծանուցանելու թէ չապկադարձ վսեմաշուք Արմենակ էֆ. Էթմէք-ճեան, անդամ ընտրուած է Յանձ-նախումբին, որ հայութեան մեծ պատիւ կը բերէ։

ԴՐԱՄԱՏՈՒՆ

Նասիոնալ դրամատունը մաս-նաճիւղ մը հաստատած է Օմտուր-մանի մէջ։ Նոր յառաջդիմութիւն տեղւոյն վաճառականներուն համար։

ԴԻՑ

«Մօքաթթամ»ի «Վաթանի» և «Ճարքի դէմ բացուած դատերը, աւելի մանրամասն քննութենէ մը անցնելու որոշում տուած է դա-տարանը։

ԱԶԴԱՑՆԱԿԱՆՆԵՐԸ

Սահմանադրութիւն պահանջող տեղացիներու ժողովոյն անդամները ժողով մը գումարելով որոշած են Լոնտրայի Արտաքին գործոց Նա-խարարին բողոքել Լորտ Բրօմլիի հրատարակած գրքին պարունակու-թեանը դէմ։

Միևնոյն ատեն որոշած են ի պատասխանի Լորտին հրատարակած-ներուն, նոր գիրք մը տպագրել արաբերէն, ֆրանսերէն և անգլ-լերէնով, և ձրիաբար ցրուել տե-ղացի ժողովրդեան մէջ։

ԱՂՔԱՏԱԽՆԱՄԸ

Եգիպտոսի ներքնագաւառներէն նը-ւիրատուութիւններ – Ասիութ. – Ս. Սարգիսեան 35 ղ. Լեւոն Թընկըր 30. Եղ-բարք Պոհճէլեան 20. Կարապետ Հէքիմ-եան 10. Ատամ Ամէնեան. Սերոբէ Ա-լէքսանեան. Դանիէլ Սըմարեան. Յա-կոբ Էնիլեան. Մաքսուտ Կարապետեան 10 ական. Յ. Սիլահեան Յովհաննէս Զուլճեան. Նաւպար Ամիրեան. Աբրահամ Անկրակեան. Գաբրիէլ քէչիչեան. Փի-լիպոս Քէչեան. Մովսէս Մինասեան. Սահակ Մալաքճեան. Սարգիս Պապիկ-եան. Մկրտիչ Քէչեան 5 ական։

Թանթա. – Վ. Պողոս պէյ Յակոբ-եան 48, 75. Կ. Էտիրնէլեան. Մէլիք Մէլէճեան. Տր. Էնֆիէճեան. 20 ական Գրիգոր Տ. Միքայէլեան. Մկրտիչ Զի-լինկիրեան. Մանուկ Աւլանեան 10 ա-կան. Յարութիւն Գալուստեան 5։

Իպրահիմիէ Շարքիյէ – Մեծ. Տիար Ղազարոս Թարազճեանի ձեռամբ. – Օհան Թօփչեան. Գրիգոր Թարազճեան. 20 ական. Յովակիմ Դայսէրլեան եւ Պաղ-հաչատուրեան. 10 ական։

Գումար 403, 75 ղրշ։

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

—o—

Մարտ ամսոյ 28 ին հրապա-րակ ելած հնդկական ԱՆԹԻՒԱ վա-րագոյրին վիճակահանութեան տա-սերը սպառած են։

Առաջիկայ կիրակի 5 Ապրիլ կէս օրէն վերոյ տեղի պիտի ու-նենայ վիճակահանութիւնը մեծ սը-ճարան Հայկականի մէջ։ Կը խընդ-բուի տոմսակ գնող և դեռ չի վճարողներէն, որ մինչև կիրակի կէս օր փութացնեն իրենց գնած տոմսերու փոխարժէքը։

Շահող թիւին տէրը 20 տոմ-սի արժէք այսինքն 10 ֆրանգի նը-ուէր մը պիտի հաճի յատկացնել։

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

—o—

Ֆիլիպէ (Պուլկարիա.) Տ. Յ. Մ Ձեր նամակը մեծաւ շնորհակալեօք ըս-տացուած է։ Ներքակեալ տառացու-ցակը չատ նպաստակայարմար էր. քիչ ատենէն կը յուսանք փոքրիկ տպըս-պրանք մը տալ։

Նախորդ եւ ստացածներ. եթէ իր տեղն է նոյնութեամբ եւ նոյն պայ-մաններուն տակ վերադարձուցէք, Ձեզի ձրիաբար չենք ընդ. այս մասին ալ նամակաւ։

Ձեր նախորդ նամակները ստացու-ած չենք, սա առաջինն է, ըստ այնմ հաշուեցէք։

Բարիզ (Ֆրանսա) Ա. Ղ. Ձեր թերթերը վերադարձուած են հաճեցէք Ձեր հասցէն ճշդել։

Ֆոշան Տ. Ֆ. Ձեր քարտ բօսաալը ստացուած է։

Մոսկուա Շ. Ձեր գրկածները չը-նորհակալութեամբ ստացուած են։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

—o—

Քերթուածներ. Արշակ Զօպանեան Բարիզ տպ. Տօղրամահեան գին 5 ֆր.

2. Նօթեր ժամանակակից հայ կեանքէն. Թուշանճեանի սպանութիւնը եւ Ար-զուման խմբակի չարաշանութիւնը։ Հա-ւաքեցին եւ գրեցին խումբ մը գործիչ-ներ Զ. Նազան կուսակցութեանց պատ-կանող. գին 1 ֆր.

3. Սեղրաք Մանդինեանը իր տնուչ Երեւանի գոլորանցին. բժիշկ Սիմէօն Շահնազարեանց՝ Մոսկուա գին 1 ֆր. 25 ս

4. Բանաստեղծ Քաղաքացին. բժիշկ Սի-մէօն Շահ-Նազարեանց Սմրատ Շահա-զիզի պատկերով գին 0. 25 սնդ.

5. Երիտասարդ Թուրքիա, Ս. Սապահ-գիւլեան գին 50 սնդ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

—o—

ՏԷՐ Բարսեղ. — ինչո՞ւ չէք շարժիր, քանի որ ժամանակին ին-ծի նեղը կը դնէիք որ տեմ, խաբեմ ու կեղծեմ։

Աշակերտ. — հիմայ դարերը փոխուած են։ Հնդկաստանի Պօմ-պայէն պիտի գայ կ'ըսեն. հաւա-տա՞նք արդեօք։

ՏԷՐ Բարսեղ. — ինչո՞ւ չէ. հաւատք քո կեցցին զքեզ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Վան 27 Մարտ. – Հայ յեղափոխա-կան մը յարձակելով հայ լրտեսի մը վրայ վիրաւորեց զայն եւ ասիկայ պատճառ եղաւ որ պաշտպանութիւնը յարձակի հայերուն վրայ, որոնցմէ սպանուեցան 33 հոգի եւ վիրաւորուե-ցան 8 հոգիներ։

Զօրքերու միջամտութեամբ մեծ կոտորածի մը առջեւը առնուեցաւ։

Բարիզ 28 Մարտ. – Կառավարու-թիւնը խորհրդարանէն 130. 000 ֆրանգի վարկ մը կը պահանջէ Գ. Ֆալիէրի Ան-գլիա տալիք այցելութեանն համար։ Իր պահանջը արդարացնելու համար, կառարկէ թէ՝ այս ճամբորդութիւնը Անգլօ – Ֆրանսական համաձայնութիւնը պիտի ամրապնդէ եւ առեւտրական յա-րաբերութիւնները պիտի զօրացնէ։

Սոֆիա 28 Մարտ. – Բ. դուռը տրա-մադիր է Պուլկարիոյ առաջարկին վրայ Սոֆիա Քէօսթէնտէլի գիծը միացնել Ռումանօվոյի հետ։

Վիէննա 29 Մարտ. – Իշխան Պիւ-լով հասած է Պ. Աէրանթալի հետ խոր-հրդակցելու համար։

Թէհէրան 29 Մարտ. – Խորհրդարանի նախագահը իր հրաժարականը տուաւ, խորդախութեանց համար ամբաստան-ուած ըլլալուն պատճառաւ. իր եղբայ-րը, որ եւմատական նախարար է՝ իրեն կը յաջորդէ։

Կ. Պոլիս 29 Մարտ. – Բ. դուռը ծա-նոյց դեսպաններուն թէ՝ Թէսալիոյ մէջ յոյն հրոսախումբեր կը կազմուին Մա-կեդոնիա արշաւելու համար։ Մօնաս-թիրի մօտ գտնուող գիւղաքաղաքի մը բնակիչները հիւպատոսներուն բողոքած են, իրենց վերագրուած ամբաստանու-թեանց եւ թուրք զօրաց կողմէ չատ մը յոյներու ձերբակալմանց դէմ։

Նիւեօրք 30 Մարտ. — Ամերիկեան մանարաններուն տրտաղրութիւնները 20 առ հարիւր պակսած են։

Ս. Բէթրսպուրկ 30 Մարտ. — Ռու-սիա Մեծ տէրութեանց նօթա մը տը-ւաւ Մակեդոնիոյ գործերուն վերաբեր-եալ։

ՍԵՂԱՆԱՒՈՐԱԿԱՆ ՏՈՒՆ

— o —

Մուսմի փողոց թիւ 6, Սինկրի մառնա-

ճիւղին հով. ժիւսքերի դիմաց.

Կը գնէ եւ կը ծախէ հրապարակի վրայ շրջաբերող բոլոր կարեւոր արժէ-թղթերը, մասնաւորաբար Քրէթի Ֆոն-սիէի հին եւ նոր, Բուսէլլի երկաթուղ-եաց եւ Բանամայի ֆրանսական վաւե-րացնալ արժեթղթերը. օրանց սկզբէն ց'այսօր չահող թիւերուն ցուցակներն ալ ունի։

Արժեթղթերու արդի խիստ նպաս-տաւոր գներէն կրնան օգտուիլ Եգիպ-տարնակ մեր ազգայինները մեղի դի-մելով։

Մասնավճարներով – 25. 50, 100 – կարելի է արժէթղթերու տիրանալ, եւ մասչելի պայմաններով՝ աւանդի փո-խարէն՝ փոխառութիւններ կնքել։

Սեղանաւորական ամեն տեսակ գործառնութեանց, եւ առեւտրական ամեն կարգի Պօնօներ գնելու պատ-րաստակամութիւն։

Սեղանաւորական եւ Պօրսայի գոր-ծառնութիւններ եւ ա՛յս կարգի գոր-ծերու վերաբերեալ գաւառներէն եղած յանձնարարութիւններ փութով կը կա-տարուին։ 12–50

ԱՐՄԵՆԱԿ ԹԱՇՃԵԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ
ՀԱՅՈՑ
ԵԳԻՊՏՈՍԻ
Թիւ 1

Գահիրէ 7) 20 Մարտ 1908

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Գահիրէի Պատկ. Ընդհանուր ժո-ղովոյ անդամներէն չորսը՝ Վսեմ. Տիգրան փաշա տ'Ասլրս, մահուամբ և Տիար Բարթիկ Նահապետեան Գէորք Թօփալեան և Կարապետ Մելքոնեան անձնական պատճառ-ներով հրաժարած, իսկ Վսեմ. Պօղոս փաշա Նուպար, Մկրտիչ պէյ Մարկոսոֆ և Տիար Ատամ Արսլանեան վիճակաւ դադարած ըլլալով, եօթը աշխարհական Ե-րեսփոխաններ պակսած են նոյն ժո-ղովէն։

Ընդհանուր ժողովն ընդունած է որ իր անդամոց թիւը կեդրոնա-կան Պատկ. Վարչութեան տնօրի-նութեան համեմատ՝ մէկ աշխարհականի և մէկ եկեղեցականի յաւելումով՝ 16 էն 18 ի բարձրանայ, ուրեմն աշխարհական ութ նոր Ե-րեսփոխանները պիտի ընտրուին դադարեալներէն, որոնք ըստ օ-րինի վերընտրելի են և ուրիշ ազ-գայիններէ, որոնք ընտրելի ըլ-լալու վիճակին մէջ կը գտնուին։

Այս ընտրութիւնները կատա-րել տալու համար Գատա. Վարչու-թեան պատ. Քաղաքական ժողովը մեր նախագահութեամբ ընտրողա-կան ժողով մը կազմած է, որ ար-դէն գործի ձեռնարկած է, Կեդ-րոն ունենալով Պէնի Սուէֆի Ա-ռաջնորդարանը և իր որոշման հա-մեմատ՝ կը փութանք յայտարա-րելու թէ վերոյիշեալ ութ աշխար-հական Երեսփոխանաց ընտրութեան օր որոշուած է տարեոյս, ըստ նոր տոմարի ապրիլ 5 ի կիրակի օրը։

Այս առթիւ Ընտրողական ժո-ղովը կը յիշեցնէ թէ քուէ տալու իրաւունք ունին ա՛յն ազգայիններն, որ

1. 25 տարին լրացուցած և Օսմանեան հպատակ են և չ'են գըտ-նուիր սահմանադրութեան 67րդ. յօդուածի տրամադրութեան ներքև։

2. Ինիկ կամ ընտանեօք ե-րեք և առանց ընտանիքի հինգ տա-րիներէ ի վեր յ'Եգիպտոս հաստա-տուած են։

3. Նախընթաց երկու պայ-մաններն իրենց վրայ միացնելով հանդերձ, 1904 Մայիս 1 էն 1907 Ապրիլ 30 եռամեայ շրջանի ազգա-յին տուրքը վճարած են ամբողջո-վին և կամ Սահմանադրութեան 65րդ յօդուածին նախատեսած վիճակի մէջ կը գտնուին, այսինքն կառա-վարութեան պաշտօնեաներ, վը-կայեալ բժիշկներ, օգտակար գրը-քերու հեղինակներ, դպրատանց ուսուցիչներ և ազգին օգտակար ծառայութիւններ մատուցած անձինք են,

Ընտրողական ժողովը քուէար-կելու իրաւունքին արդէն հաս-տատուած ազգայիններուն մասնա-ւոր նամակներ և քուէթուղթ պիտի ղրկէ առաջիկայ ընտրութեանց առթիւ և իր ստացած հրահանգին համաձայն՝ մինչև առաջիկայ Ապ-րիլ 3, Ուրբաթ, իրիկուն ժամը հինգ կերկարաձգէ տուրք վճարելու

պայմանաժամը, որպէսզի անոնք որ անուններին Առաջնորդարանի տումարաց մէջ արձանագրեալ է և ընտրական իրաւունք կրնան վայելել՝ տուրք վճարելով ու կ'ուզեն մասնակցիլ առաջիկայ ընտրութեանց, դէրութիւնն ունենան վճարելու զայն և իրենց անուններն արձանագրել տան ընտրողաց ցանկին մէջ։

Տուրքը, տարեկան 25, 50 կամ 75 եգ. ոսկի դրշ. է ըստ կամս վճարողին, և կարելի է վճարել հաւատքիչ Պ. Տիգրան Տէօվլէթեանի և կամ Կիրակի և տօն օրերէն զատ՝ ամեն օր առաւուան ժամը 9 – 12 և իրիկունը 3 – 5. Առաջնորդարանի Դիւանատան, ամէն պարագայի տակ պաշտօնական ընկալագրի փոխարէն։

Իսկ անոնք, որոնց անուններն արձանագրուած չ'են Առաջնորդարանի տումարաց մէջ, սակայն իրենք գիտեն թէ վերոյիշեալ պայմանաց մէջ կը գտնուին և անձնական արժանիքով և կամ տուրք վճարելով իրաւունք կրնան ստանալ առաջիկայ ընտրութեանց ատեն քուէ տալու, Առաջնորդարան կը դիմեն, անոր տարւոյս Յունուար 14 թուական և 364 համարաւ պաշտօնական յայտարարութեան տրամադրած կերպով և հաստատելով իրենց ինքնութիւնն՝ պէտք եղածն ի գործ կը դնեն և անուններին արձանագրել կուտան ընտրողաց ցանկին մէջ, որու մեր ստորագրութեամբ վաւերացեալ մէկ օրինակը կախուած է արդէն Գահիրէի Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ բակին մէջ։

Առաջնորդական փոխանորդ և Նախագահ Ընտրողական Ժողովոյ
Յարութիւն քհնյ. Յակոբեան

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ՍՈՒԼԹԱՆ
ԱՊՏԻԻԼ ՀԱՄԻՏ ԻՆՉՊԷՍ ՄԵՌԱԻ
ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ ԹԻՒ 3
ԳՐԲՈՑԿԸ
Գահիրէէն կրնան դիմել ԱՐՇԼՈՅՍԻ Տպարանը՝ եւ Արուարձաններէն Հեղինակին հետեւեալ հասցեով.
M. ARAM
Grand Café Arménien
Le Caire – Egypte

ԹԱՏՐՈՆԸ ՏԱՂՏՈՒԿ ԿԱՏԱՐԵԼ ԵՂԵՐ

—o—

Պար-բերական թերթի մը մէջ՝ Մաթուսաղա ստորագրութեան տակ ազգային զարգացման մեծապէս փափաքող յօդուածագիր մը, անպատեհ դադարներու շարք մը ցուցադրած էր։ Հաւանական է թէ ատոր պատասխանել չպիտի ուզէի, եթէ զայն արտադրողը պարահանդէսներու պար-բերական կազմակերպութիւնները Եգիպտաբնակ հայերու յառաջդիմութեան լաւագոյն միջոցը չի համարէր։

Թատրոնի նկատմամբ յայտնած ուղղմիտ գաղափարները արդահատանք կը պատճառեն ինձ. «Թատրոնի մը պոչեն բռնած կերթանք. կը դրէ մեր բանիմաց յօդուածագիրը. ի բաց առեալ Աղքատախնամի Օբերայի ներկայացումէն, մնացեալներն ամենն ալ տաղտուկ ազդելի զատ ուրիշ ոեւէ հանդամանք չ'ունին, կ'ըսէ. Օբերայի ներկայացումը հաւնած է, ըստ իս, ո՛չ թէ դերակատարներու յաջող կերպով իրենց դերերը կատարած ըլլալուն համար, այլ՝ ա՛յն պատճառաւ որ հոն (ballet) ի դերուհիները ինքզինքնին կը ցուցադրեն իրենց ամեն կողմերով....

Հայ թատրոնը ձանձրացուցիչ կըլլայ՝ կարող դերասաններու չ'գոյութեան պատճառաւ. ե՛ս ալ համակարծիք եմ այդ մասին, բայց ի՞նչ պէտք է ընել. թատրոն չ'յաճախե՛լ տաղտուկէ զերծ մնալու համար. հաւատի եմ թէ՝ Գրիգոր Լուսաւորիչ Հայոց գարաւոր մեհեանները քանդելով քուրմերը հալածեց՝ եւ մեր նախնեաց թանկագին գրականութիւնը բնաջինջ ընելով, բուռն հալածանք մը կատարեց հին կրօնին հետեւողներուն հանդէպ։ Մեր խելացին ալ եթէ անոր պէս ազդեցիկ մէկն ըլլար, հայ թատրոնը քանդելով նոյն եռանդով հայ դերասաններն ալ պիտի հալածէր, թատերասէր հասարակութիւնն ալ։

Հայ թատրոնին անկերպարան վիճակը՝ անծրագիր ապրողներու՝ (որոնք դժբաղդաբար մեծ համեմատութիւն մը կը կազմեն հայ տարրին մէջ) անտարբերութեան հետեւանօք եղած է. զարմանալի է թէ՝ միշտ աչքի առաջ ունենալով Եւրոպացիները որոնք բոլոր ուժով կը քաջալերեն իրենց թատրոններն մենք հայերս կատարեալ հակապատկեր մը կը կազմենք իրենց. մենք՝ որ ամեն ազդէ աւելի հետեւող մը եղած ենք միշտ Եւրոպական քաղաքակրթութեան ի՞նչու յետադէմ մնանք թատրոնի նկատմամբ եւս։ Եւրոպացիներն բարոյապէս եւ թէ նիւթապէս կօգնեն իրենց տաղանդաւոր դերասաններուն. գրագէտները իրենց աշխատութենէ բաւական կարեւոր մասը կը նուիրեն թէ՝ իրենց թատերական repertoire ը ճոխացնելու եւ թէ ամեն ջանք ի գործ կը դնեն թատրոնը շահագրգռական ընելու իրենց ժողովրդին։

Եթէ դերասանները դուրսէն պիտի հասնին, անոնց ժամանումէն առաջ բաժանորդագրութեան տոմսակները ըսպառած են արդէն, որով Եւրոպացի դերասանը ամենայն ոգեւորութեամբ կը կատարէ իւր դերը, զերծ ըլլալով նիւթականի մտազբաղումէ։ Մենք հայերս ընդհակառակն, մեր ո՛չ թէ անյաջող այլ հազուագիւտ տաղանդի տէր դերասաններուն իսկ օգնել չենք ուզեր, մեր ազգային թատրոնը բոլորովին լքուած է, դերասաններու քաջալերանք առթող ոեւէ ջանք չենք ըներ. միայն քանի մը դերասանուհիներ՝ գո՛նէ նիւթապէս կրցան քիչ կամ շատ քաջալերուիլ. անցեալ տարիներ երբ խեղճ Պարոն Կ. Գալֆեան Դահիրէ այցելելու զժբաղդութիւնն ունեցաւ, Քրիստոսի նման հալածուեցաւ. բարեբաղդաբար չոգեկառքը գոյութիւն ունէր. ապա թէ ոչ՝ անոր պէս ինքն ալ էշ նստելով բապուճսըզ փախչելու պիտի ստիպուէր. եթէ կրկին Եգիպտոս այցելելու անխոհեմութիւնն ունենայ օր մը, ես իրեն խորհուրդ կուտամ որ Օրիորդ Գալֆեան անուամբ եւ կնոջական լաթերով հագուած դայ, եթէ կ'ուզէ կանխաւ համակիրներ եւ կարգադիր մասնախումբ ունենալ, որպէս զի ասոնք կատարեն ծախքերը եւ սպառեն տոմսերը։

Երբ դերասաններն են որ տոմսակ ծախելու կ'ելլեն, ճիշտ այդ պահուն կ'սկսի Եգիպտոսի հայկական քօլեան ու քրիզը, եւ կը տեւէ մինչեւ ներկայացումի լրանալը առարկութիւններու տարափ մը հրապարակ կ'ելլէ, մեկը սուգ ունիմ կ'ըսէ թատրոն չեմ կրնար երթալ, ուրիշ մը անգործ է, երրորդ մը տունը հիւանդ ունի. կարգ մը մարդիկներ ալ խոյս կուտան խանութի աշակերտին ապսպրելով թատրոնի տոմսակ բերողներուն ճամբու դրրուելի։ Այսպէս տհագին դժուարութիւններով է որ քանի մը տոմսակներ կը ծախուին եւ գոյացած հասոյթը չտա անդամ հեռի կը մնայ եղած ծախսերը գոցելէ, այս պարագաներու տակ ի՞նչպէս կարելի է հայ թատրոնը նախանձելի դիրքի մը մէջ տեսնել, մինչդեռ բաղդախաղ ընդհանրացնելու համար, ամեն օր նորանոր ընկերուցիներ կը կազմուին ընտանեկան շրջանակներու, սրճարաններու եւ գինետանց մէջ, եւ որոնց, ցաւ ի սիրտ պարտինք խոստովանիլ անխտիր կը մասնակցին ամեն սեռի եւ ամեն դասակարգի մարդիկ. ծառան թէ տէրը, գրագէտը թէ յեղափոխականը, ամենքը նոյն յիմարի թափով կը վատնեն իրենց թանկագին ժամերը խաղասրահներու մէջ. անոնք որ կը խուսափին այդ վայրերէն՝ գինետուներու մէջ արբեցութեամբ կ'զբաղին եւ հոն կը փճացնեն իրենց ճակատի քրտամբ շահած լումաները. այդ երկու ապականարար հասատութիւնները չ'յաճախելու բարեբաղդութիւնը ունեցող ո՛չ նուազ ազգայիններն ալ ինքզինքնին մեղկութեան կ'ուատան զանազան վայրերու մէջ, ահա թէ Գահիրէի հայութիւնը ինչի՞ կը գործածէ իւր եռանդը. որ եթէ ազգային յառաջդիմութեան գործածէր շատ աւելի նըպաստաւոր դիրքի պիտի հասնէր քան ինչ որ է հիմայ, թատրոնն է որ ազգի մը նկարագիրը կը բարձրացնէ, քանի որ ան գոյութիւն չունի, ամեն անհատ ինքնաբերաբար վերոգրեալ կործանարար վայրերէ մէկուն պիտի դիմէ գոնէ հաճելի ժամանց մը ունենալու համար, որով ազգայնութեան զգացումը պիտի թմրի մեր մէջ եւ հեղհեղակ անհեռի։

Վերջապէս եթէ վերոյիշեալ յօդուածագիրը կը փափաքի ազգային բարերար մ'ըլլալ, փոխանակ պարահանդէս կազմակերպելու՝ միջոցներ թող մտածէ հայ ժողովուրդը, սրճարանէ, գինետունէ, խաղասրահներէ եւ այլ անպատուաբեր վայրերէ ետ կեցնելու համար հասատութիւն մը ստեղծել։

Ահա այս տեսակ ձեռնարկ մէ որ կը պակսի մեր մէջ, ուր ամեն անհատ իւր ճաշակին գոհացում կարենայ գտնել եւ ուղէ բոլոր հաճութեամբ մասնակցիլ. ատով կարելի պիտի ըլլայ ազատիլ։ Մե՛ղք. Եգիպտահայութիւնը իւր մօտաւոր անկումին ատիճաններուն վրայ է. ամեն հայ թող լրջօրէն խորհի այս մասին։

Ե. Մ.

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՋԻՆԱՆՇԱՆԻ
ԱՍԵՂՆԱԳՈՐԾ
ՄԱԾՐ ՀԱՅԱՍՏԱՆ
ՄԵՏԱՔՍՈՎ ԲԱՆՈՒԱՆ
400 թիւէ բաղկացած
ԹԻՒԸ 5 ՂՐՇ. ՈՂՋ
Մեծ սրճարան Հայկականի մէջ ի ցոյց դրուած սոյն անեման մետաքսեայ ձեռագործի վիճակահանութիւնը՝ որուն անցեալ Փետրուար ամսոյ մէջ տեղի ունենալը ծանուցուած էր, բայց ինչ ինչ պատճառներով յետաձգուած է. անոնք որ սոյն չքնաղ զարդը ունենալ կը ցանկան, ժամ առաջ թող դիմեն «Արշալոյս»ի տպարանը Տ. Դէորդ Փափազեանի՝ մնացեալ սակաւաթիւ տոմսերէն գնելու համար, որմէ անմիջապէս յետոյ տեղի պիտի ունենայ վիճակահանութիւնը Հայկական սրճարանի մէջ կանխաւ ծանուցուելով։

ՏՕՔՔ ԵՍՊԷՐ Լ. ՃԷՐՔՕՊԵԱՆ
ՇԱՐԱ ՆՈՒՊԱՐ ԲԱՇԱ, ԹԻՒ 20

Ամերիկայի համալսարաններէն վկայեալ և անուանի հիւանդանոցներու մէջ գործնական փորձառութիւն ստացած բժշկուհի. յաջողակ վիրահատ՝ ենթակային առանց ցաւ պատճառելու։

Մանկաբարձուհի և մասնագէտ՝ կանանց ծննդական գործարաններու և ափրոդիտեան ախտերու, իսկ մանուկներուն՝ ամէն տեսակ հիւանդութիւններու։

Կատարեալ խնամքով և գիտական նորագոյն մեթոտներու շնորհիւ հիմնապէս կը բժշկէ իր խնամոց յանձնուած հիւանդները։

Հիւանդ կ'ընդունի ամեն օր կէս օրէ յետոյ ժամը 2-5

Ամէն երեքշաբթի աղքատաց ձրի դարմանում։

ՀԵԶԱՍԿ
Կեդրոնական Օրկան Հնչակեան Կուսակցութեան
ԲՍԱՆԵՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Հասցէ՝ M. Bellart
24 Avenue du parc de Montsouris
France Paris

ԱՐՄԵՆԻԱ
Լրագիր Ազգային, Քաղաքական եւ այլն.
ԻԲ տր. ՏԱՐԻ
Հասցէ՝ M. Portoukalian
Directeur du journal « ARMENIÁ »
France Marseille

ՌԱԶՄԻԿ
Լրագիր Ազգային, Գրական եւ Քաղաքական.
ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ
Հասցէ՝ Rédaction du journal arménien « RAZMIG »
Bulgarie Pilippople

ՌԱԶՄԱՎԷՊ
ԱՄՍԱԳԻՐ
Գրական, Գեղարուեստական եւայլն
ԿԶրդ. ՏԱՐԻ
Հասցէ՝ Rédaction de la Revue « PAZMAVEB »
Itali St. Lazare—Venise

ԱԶԳ
Շաբաթաթերթ Ազգային Գրական եւ Քաղաքական
Առաջին Տարի
Հասցէ՝ The « AZK » Pub. Co.
175 Tremon St. Boston ; Mass.

ԻՐԱՒՈՒՆՔ
ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԺԳրդ. ՏԱՐԻ
Հասցէ՝ Rédaction du journal « IRAVOUNK »
Boulgari VARNA